

Կիպրոսի յունական բաժինին մէջ երէկ տեղի ունեցան նախագահական կենսական քննարկումներ: Արդարեւ, նորընտիր նախագահը կիպրոսը պիտի առաջնորդէ ղեկի անկիւնադարձային 2 դէպքերու բաժնուած կողմին համար ՄԱԿի կողմէ առաջարկուած լուծում մը եւ Եւրոպական Միութեան անդամակցելու համար համաձայնութեան մը կնքումը:

Ներկայ նախագահ Կլաֆթոս Բլերիտէս (83 տարեկան) վերընտրութեան համար իր թեկնածութիւնը դրած է, սակայն անոր դէմ մարտահրաւիր ուղղած է իր գլխաւոր մրցակիցը՝ Թասոս Փափատոփոլոյս (69 տարեկան):

Կեղրոսի աջ Տիքո կուսակցութեան ղեկավար Փափատոփոլոյս խորհրդարանին մէջ գլխաւոր ընդդիմադրութեան՝ համայնավար ԱԲԼ կուսակցութեան եւ այլ խմբակներու պորակցութիւնը կը վայելէ:


(ԱՖՓ)

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐԸՒ ՏԱՐԱԾՔԻՆ ՄԻԼԻՈՆԱԲՈՐ ՄԱՐԴԻԿ Ո՞՞՞ ԸՍԻՆ ԻՐԱՔԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ

Ծայրագոյն Արեւելքէն մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա, միլիոնաւոր մարդիկ իրենց բողոքի ձայնը բարձրացուցին շարժապատկերին՝ ո՛չ ըսելու իրաքի դէմ պատերազմի մը եւ պահանջելու որ խաղաղ միջոցներով լուծուի տագնապը: Վիեթնամի պատերազմին դէմ կատարուած ցոյցերէն ի վեր, այս տարրողութեամբ հակապատերազմ հաւաքներ տեղի չեն ունեցած աշխարհի տարածքին: Հակայական ցոյցերն ու հաւաքները հաւանաբար դանդաղեցուցին Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշի կինուորական արշաւին թափը, սակայն պիտի կարենա՞ն պայն վերջնականապէս խափանել: Պուշի կինուորական ծրագրին կորստի վրայ կանգնող Աւստրալիոյ եւ

Բրիտանիոյ մէջ եւս բողոքի մեծ ցոյցեր կազմակերպուեցան, շեշտելու համար, որ ժողովուրդը չի բաժնէր իր կառավարութեան տեսակետները: Պատերազմը մերժող ցոյցերը կազմակերպող խաղաղասէր շարժումներու պատասխանատուները յայտնեցին, որ աւելի քան տասը միլիոն խաղաղասէրներ մասնակցեցան համաշխարհային բնոյթ ստացած ցոյցերուն, որոնք կը նկատուին ցարդ կատարուած մեծագոյն հաւաքը: Կազմակերպողներուն համաձայն 11,5 միլիոն հոգի մասնակցած է, մինչ ռուսիկանութիւններն ու ապահովութեան աղբիւրները կ'ըսեն թէ ութ միլիոն ցուցարար մասնակցած է:

Միացեալ Նահանգներ, որոնց կառավարութիւնը պարզած է պատերազմի դրօշը, վերջնականապէս պատերազմը մերժող ցոյցերէն: Նիւ Եորքի ցոյցի մասնակցեցաւ 250 հազար հոգի: Կազմակերպողները հարիր



Հոլիվուտի մէջ բազմահազար ամերիկացիներ մասնակցեցան հակաամերիկեան ցոյցին

րութիւնը պարզած է պատերազմի դրօշը, վերջնականապէս պատերազմը մերժող ցոյցերէն: Նիւ Եորքի ցոյցի մասնակցեցաւ 250 հազար հոգի: Կազմակերպողները հարիր

հազար կ'ակնկալէին: Ծարձապատկերի մարաքաղաք Հոլիվուտի ցոյցին մասնակցեցան հազարաւոր մարդիկ, որոնց կարգին էին մեծ թիւով դերասաններ: Յուգարարները

բարձրացուցած էին «Ո՛չ իրաքի դէմ պատերազմին», «Ո՛չ քարիւղի փոխարէն արեան» պատաստներ: Շիքակոյի մէջ եւս՝ անուանելով վերոյն վարջերմաստիճանը եւ

միւսը, քանի մը հազար քաղաքացիներ մասնակցեցան պատերազմը մերժող ցոյցին: Ամերիկեան այլ քաղաքներու մէջ ալ կազմակերպուեցան բողոքի ցոյցեր ու քայլաշարձներ:

Աւստրալիոյ քաղաքներէն Սիտնիի մէջ կազմակերպուած ցոյցին մասնակցեցան քառորդ միլիոն ցուցարար: Աւստրալիացիք կը բողոքեն իրենց վարչապետին դէմ, յայտարարելով որ ան մտիկ չ'ընէր իր ժողովուրդին: Աւստրալիա 2 հազար պիւտր ուղարկած է Օնց:

Եւրոպայի մէջ, Լոնտոն դարձաւ մեծագոյն ցոյցերէն մէկուն կեղրոնը: Ուստիկանութիւնը յայտնեց, որ աւելի քան 750 հազար ցուցարար մասնակցած է, կազմակերպողներուն համաձայն՝ պատճառաւ պատերկու միլիոն բրիտան

նացի մասնակցած է: Բրիտանական մամուլը երէկ վզուցացումի կող ուղղեց վարչապետ Թոնի Դլերի՝ դիտել տալով որ ան քաղաքական անկումի ռիսքի մը դիմաց կը գտնուի ամերիկեան պատերազմական օրապիտակներուն պորավիզ կանգնելուն համար: Օրաթերթերէն մէկը կը գրէր, որ Դլեր կը դիմագրաւէ քաղաքական սպառնալիք իր մեծագոյն տագնապը, որովհետեւ չյաջողեցաւ բրիտանացիները համոզել, թէ իրաք սպառնալիք մը կը ներկայացնէ: Դլեր սակայն մնաց անդրդրելի եւ ցոյցերէն քանի մը ժամ առաջ կեղրոնը: Ուստիկանութիւնը յայտնեց, որ արքան ալ մեծ ըլլալ մասնակցողներուն թիւը, անիկա պիտի ըլլալ աւելի փոքր Սատամի պատճառաւ պատերկու միլիոն բրիտան

Շար.ը՝ էջ 10

ԱՀԱԻՐ ԱՐԿԱԾ՝ ՄԱՍՆԱԱՅԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑՔԻՆ ՎՐԱՅ

Լիբանան – Սուրիա սահմանային Մասնաշաղկապի անցքը երէկ թատերաբեմ դարձաւ ահաւոր արկածի մը, որուն կոհ գացին իրենց ինքնաշարժներուն մէջ սպասող 11 անձեր, ուրիշ տասնմէկ անձեր վիրաւորուեցան, իսկ հրոյ ճարակ դարձան բազմաթիւ ինքնաշարժներ:

Արդարեւ երէկ առաւօտեան ժամը 10:30ին սուրիական բանակին մէկ փոխադրակառքը, որ շուրջ 12 հազար լիթր մակուի կը փոխադրէր, բախեցաւ սահմանային անցքին վրայ կանգ առած ինքնաշարժներու: Փոխադրակառքին ընդունարանին մակուի շարժումներուն թափեցաւ ճամբան եւ ինքնաշարժներուն վրայ՝ հրոյ ճարակ դարձնելով պանոնք: Հաղորդուեցաւ, որ փոխադրակառքը սահած է արգելակներու խանգարման պատճառով:

Ներքին ապահովութեան ուժեր անմիջապէս փակեցին ճամբան եւ հրշէջներ, շտապ օգնութեան խումբեր, հիւանդատար ինքնաշարժներ եւ Լիբանանեան Կարմիր Խաչի կամուրներ փութացին արկածին վայրը մարելու հրդեհը, փոխադրելու վիրաւորները եւ օժանդակելու վիրակարար աշխատանքներուն, որոնց մասնակից դարձան նաեւ սուրիական ուժեր:

Վիրաւորները փոխադրուեցան շրջանի մօտակայ հիւանդանոցները Պեքայի եւ Դամասկոսի մէջ: Չոհերուն դիակները դարձած էին անձանաչելի: Ամբողջութեամբ հրոյ ճարակ դարձան սուրիական թիւ կողմէ Եօթը, Լիբանանեան թիւ կողմէ ութ եւ յորդանանեան թիւ կողմէ մէկ ինքնաշարժներ:

Չոհուած ճամբորդներուն մեծամասնութիւնը կը վերադառնային իսլամական հաժի արարողութիւններէն: Անոնց շարքին էր յորդանանցի մար մը՝ իր երեք պաւակներով, որոնց տարիքները կը տարրաբերէին 5էն 9 տարեկանի միջեւ:

Արկածին վայրը այցելեցին ներքին գործոց եւ պաշտպանութեան նախարարներ՝ Էլիաս Մըր եւ խալիլ Հըրաուի, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ սուրիական ուժերու ապահովութեան պատասխանատու Վօր. Ռըսոմ Ղապալի, շրջանէն երէկ փոխաններ, Պեքայի նահանգապետ Անթուան Սլեյման, եւ բանակի Պեքայի հրամանատար Վօր. Ալի Հաժ:

ԻՍՐԱՅԷԼ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՓԱԿԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Իսրայէլ որոշեց անորոշ ժամանակուան համար փակ պահել պաղեստինեան շրջանները, իբրեւ հակադարձութիւն պաղեստինեան գործողութեան մը, որուն թիրաք դարձած էր իսրայէլեան հրատայ մը: Միեւնոյն ատեն սակայն, իսրայէլ արտօնութիւն տուաւ պաղեստինեան պատուիրակութեան մը Լոնտոն մեկնելու, ուր բանակցութիւններ պիտի ունենայ իսրայէլեան պատուիրակութեան մը հետ:

Իսրայէլեան բանակին մէկ բանբերը Շաբաթ երեկոյեան յայտարարած էր, որ պաղեստինեան շրջաններուն շրջափակումը կու՛մը հաստատ պիտի մնայ անորոշ ժամանակուան մը համար, իբրեւ



Պաղեստինցի կին մը՝ իր տան ավերակներուն մէջ էր, որ պաղեստինեան շրջաններուն շրջափակումը կու՛մը հաստատ պիտի մնայ անորոշ ժամանակուան մը համար, իբրեւ հակադարձութիւն պաղեստինեան շարժակումներուն, որոնք թափ ստացած են վերջերս: Կաշար.ը՝ էջ 9

ՄԵԾԱՄՕՐԻ ԿԱՅԱՆԻՆ ՓԱԿՈՒՄԸ ՍԻԱԼ ՈՐՈՇՈՒՄ ՄԸՆ ԷՐ

Կ'ԸՍԷ Ռ. ԲՈՂՍՐԵԱՆ

Նախագահ Ռոպերթ Քոչարեան Արմաւիրի մարզին մէջ քուէարկողներու հետ իր հանդիպումին անդրադարձաւ Մեծամօրի կորիզային կայանին՝ նկատել տալով, որ օրին սխալ որոշումով Մեծամօրի աշխատանքէ դադարեցումը երկրին արդիւնաբերութեան անկումին պատճառ եղաւ:

Նախագահ Քոչարեան ըսաւ, որ ուժանիւթի տագնապ չէր ստեղծուեր, եթէ կորիզային կայանը չփակուեր, որ նաեւ պատճառ եղաւ կողպուտի: Ան ըսաւ, որ միլիոնաւոր տոլարներ ծախսուած են ապահովելու համար կորիզային կայանին անվտանգութիւնը, որ այսօր կը համապատասխանէ միջազգային ստանդարտներուն:

Նախագահ Քոչարեան նաեւ հանդիպում ունեցաւ Էջմիածնի բնակիչներուն հետ, որոնց հետ խօսեցաւ աշխատանքի նոր առիթներ ստեղծելու հետաճակարներուն մասին:

Երեւանի Մայրթիա – Սեբաստիա համայնքին բնակչութեան հետ իր հանդիպումին, նախագահ Քոչարեան լուսարձակի տակ առաւ տեղւոյն հարցերը՝ բնակելի շէնքերու վերանորոգում, ջրամատակարարման հարց, եւ այլն, շեշտելով, որ անոնք պետք է լուծուի արդիական եւ ժամանակակից չափանիշներով:

ԹՈՒՐՔ ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐ՝ ԶԵՉԵՆԻՈՅ ՄԷՋ

Ռուս սպաններ երէկ յայտնած են, թէ թուրք 4 վարձկաններ մաս կը կազմէին ըմբոստներու խմբակի մը, որ շաբաթավերջին բնաջնջուած է:

Ըստ գիտնականական աղբիւրներուն, մահացած մարդիկը, որոնք սպաննուած են Չեչենիոյ հարաւային Շալի շրջանին մէջ, կը կրէին փաստաթուղթեր, որոնք ցոյց կու տային, թէ անոնք թուրք են:

Ըստ ռուսական գաղտնի սպասարկութիւններուն, ներկայիս թուրք շուրջ 20 վարձկաններ կը պայքարին Չեչենիոյ մէջ: Կ'ենթադրուի, որ իսլամական ծայրախոյզական խմբակներէ շարք մը արաբ վարձկաններ յոյնպէս չեչեններու կողքին կը կռուին:

ԱՐԱՆՈՎ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒ ԴԱԴՐԵՑՄԱՆ ԿՈՉ ԿՈՒՂԴԷ

Միւս կողմէ, չեչեն անջատողական փոխ նախագահ Վախա Արսանով կող ուղղած է ըմբոստ գիւնեալները:

Շար.ը՝ էջ 3

ՊԸՆ ԼԱՏԷՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԷՄ

«Քալիտա» ցանցին ղեկավարը՝ Ուսամա Պըն Լատէն, 53 վայրկեան տեւողութեամբ ժապաւենի մը մէջ յայտարարած է, թէ Մ. Նահանգներու դէմ իր պայքարը պիտի շարունակէ:

Համացանցին վրայ է «Հայթ» թերթին մէջ երէկ լոյս տեսած ձայնագրութեան մէջ, Պըն Լատէն պզուցացուցած է նաեւ թէ իրաքէն ետք, Եգիպտոսի, Սուտանի եւ Սուրիոյ նման արաբական երկիրներ, ինչպէս նաեւ Իրան, պիտի դառնան Մ. Նահանգներու յաջող թիրախները:

Ան նախագահ ձորձ Պուշը նկարագրած է իբրեւ «ապուշ» եւ «դարուս փարաւոր»:

Չայնագրութիւնը կոչ ուղղած է իսլամներուն «ամերիկացիները պարտութեան մատնելու կարելիութեան համոզուելու», նշելով վերջին տարիներուն աշխարհի տարածքին ամերիկեան կեղրունեւ-

րու դէմ յարձակումներու ցանկ մը: Պըն Լատէն դատաւարած է արաբական աշխարհին մէջ Ուստիկանի տարած «խաչակրութիւնը»:

Միւս կողմէ, ան դատաւարած է սեւուոցի եւ Օղի այլ ղեկավարներ, պանոնք Մ. Նահանգներու խաղաղիքները նկատելով, նման ամերիկեան պորակցութիւն վայելող ԱՖղանիստանի ղեկավար Համիդ Քարզայի:

Չայնագրութիւնը կը յաջողորմանցաւ Երեքշաբթի օր պատկերասփիւռի «Ժապիրա» կայանին սփռած մէկ այլ ձայնագրութեան, ուր ձայն մը, որ ըստ Ուստիկանի, Պըն Լատէնի կը պատկանի, կոչ կ'ուղղէր իսլամներուն անձնասպանական գործողութիւններու ձեռնարկելու եւ ամերիկեան հաւանական յարձակումէ մը պաշտպանելու իրաքը:

(ԱՖՓ)

ԶՕՐ. ԼԱՀՈՒՏԻՆԻ ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՄԻՋԵԻ ԳԺՏՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ

ԿՐԸՄ Դ. ԱՐԻՏԻ

Տեղեկատվության նախարար Դալի Արիտի անցյալ շաբաթավերջին շեշտեց, որ նախագահ ԿՕՐ. Էմիլ Լահուտի եւ մարտնչներու նախալա- Պուրոս Սֆէյր պատրիարքին միջեւ գծու- թին գոյություն չունի:

Արիտի նկատելի տուաւ, որ գործակցութեան փափաք կայ նախագահ Լահուտի եւ վարչա- պետ Ռաֆիք Հարիրիի միջեւ՝ շրջանցելու հա- մար նախկին բանավեճերու հանգրուանը եւ ամրապնդելու ներքին մթնոլորտը:

Ան ընդգծեց նաեւ, որ նախագահ Լահուտի եւ վարչապետ Հարիրիի միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւններ կատարուած են, երբ վարչապետ Հարիրի Փարիզ կը գտնուէր ապա- քինման համար:

Արիտի շեշտեց եւ վերահաստատեց իր յայ- տարարութիւնը, թէ՛ նախագահ Լահուտի եւ վարչապետ Հարիրիի միջեւ տարակարծու- թեան տրուած է պետք եղածէն աւելի կարեւո- ռութիւն:

Արիտի յայտնեց, որ բջիջային հեռաձայնի ապապետականացման թղթածրարը պիտի քննարկուի այսօր՝ վարչապետ Հարիրիի գլխա- տրութեամբ, շեշտելով, որ պետութեան շահե- ըը պիտի նկատուին առաջնահերթ: Ժողովին ներկայ պիտի գտնուին հաղորդակցութեան մի- ջոցներու նախարար Ժան Լուի Քորտաի եւ ապապետականացման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Դալի Եուսէֆ:

Անդրադառնալով լրատու աղբիւրներու գոր- ծունէութեան՝ Արիտի ընդգծեց, որ տնտեսա- կան ծանր պայմաններուն պատճառով տեղե- կատուութեան աղբիւրները կը գտնուին տագ- նապահար կացութեան մէջ, սակայն աւելցուց, որ անոնք կ'ուզեն շարունակել իրենց աշխա- տանքը՝ նշելով, որ տեղեկատուութիւնը միեւ- նոյն ժամանակ պատգամ է եւ պէնք: Ան կոչ ուղ- ղեց լրատու բոլոր միջոցներուն՝ նախապաշար- թիւն տարածելու ժողովուրդին մէջ լիբանանե- ան շրջաններու մէջ գոյութիւն ունեցող հար- ցերէն, առաջնահերթութիւն ընծայելով թմրե- ցուցիչի դէմ պայքարին եւ կենսոլորտային հարցերուն:

ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Յակոբ Գուլումեան եւ զաւակուներ
- Տէր եւ տիկին Յովհաննէս Գուլումեան եւ զաւակուներ
- Տէր եւ տիկին Սարգիս Գուլումեան եւ զաւակուներ
- Տիար Միսաք Գուլումեան
- Տիկին Վարդանուշ Գուլումեան
- Տիկին Մաքրուհի Գուլումեան
- Կը գուժեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին՝

ՄԱՐԻ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետրուարին, լեռ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 17 Փետրուարին, առաւօտեան ժամը 11:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկե- ղեցուց մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փո- խադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմա- նատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հան- գուցեալին պակին՝ Սաօ Գուլումեանի բնա- կարանը Մալրաթ Եաշուի, Երկուշաբթի 17, Երեքշաբթի 18 եւ Չորեքշաբթի 19 Փետրուարին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուր- ատուութիւններ կատարել ԼՕՍԻ «Գայիանէ» մասնաճիւղին:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Սեդա Մետրոպեան
- Տէր եւ տիկին Թորոս եւ Զանի Մետրոպեան եւ զուսորդ
- Տէր եւ տիկին Ժանօ եւ Թամար Պէրպէրեան եւ զաւակուներ
- Տիկին Ալիս Դապիպեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Գալուստ Մետրոպեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Լեւոն Մետրոպեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Յարութիւն Դազարեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Նիկոլ Արզումանեան եւ ընտանիք
- Շահինեան ընտանիք
- Պէրպէրեան ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուս- նոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝

ԲԻԻԶԱՆԴ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 14 Փետրուար 2003, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, իր ընկալարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատար- ւեցաւ Շարաթ, 15 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տա- ճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրե- ւեցաւ Ֆրիւն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հան- գուցեալին բնակարանը, Ժէլ Էլ Տիպ, Երկու- շաբթի 17 եւ Երեքշաբթի 18 Փետրուարին:

ԱՐԱԲ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԵՑ ԻՐԱՔԻ ՏԱԳՆԱՊԸ

Գահիրէի մէջ երէկ տեղի ունեցաւ արաբ արտաքին գործոց նա- խարարներուն ժողովը, որ նախագահու- թեան արտաքին գոր- ծոց եւ արտերկրի լի- բանանցիներու հար- ցերու նախարար Մահմուտ Համմուտի: Իր խօսքին մէջ, Համմուտ կոչ ուղղեց Իրաքի՝ շարունակելու գործակցութիւնը ՄԱ- Կի պէնքի քննիչնե- ռուն հետ, ստեղծելու համար փոխադարձ վստահութեան ենթա- հող մը, որպէսզի անոնք կարենան գլուխ հանել իրենց առաքելութիւնը:

Համմուտ յայտնեց, որ ՄԱԿի Ապահովու- թեան խորհուրդի թիւ 1441 բանաձեւը կը շեշ- տէ, որ Ապահովու- թեան խորհուրդն է, որ կը հսկէ Իրաքի տագնապին լուծման: Անիկա նաեւ կ'ընդգը- ժէ, որ Ա. խորհուրդը իրատեսութիւն ունի քննելու պէնքի քննիչ- ներուն աշխատանքն ու տեղեկագիրները՝ մերժելով որեւէ այլ որոշում, որ կը տրուի պետութեան մը կող- մէ:

Համմուտ ըսաւ, որ Ապահովութեան խոր- հուրդը արդէն իսկ քննարկած է քննիչնե- ռուն աշխատանքը՝ գիտնալով հանդերձ, որ անոնց ներկայա- ցուցած տեղեկագիրին համաձայն ոչ մէկ ապացոյց կայ, թէ Իրա- քի մէջ կը գտնուին հաւաքական քանդու- մի պէնքեր: Ան դիտել տուաւ, որ բոլոր այն երկիրները, որոնք բարի նպատակներ կը հետապնդեն, պետք է, առիթ ընծայեն պէնքի քննիչներուն, որպէս- չի անոնք շարունա- կեն իրենց աշխա- տանքը:

Համմուտ ընդգծեց, որ ՄԱԿի 1441 բանա- ձեւին գործադրու-

թիւնը միջազգային օրինականութեան հետ համընկնող միակ ընտրանքն է:

Համմուտ շեշտեց, որ արաբական բոլոր երկիրները կը մերժեն պատերազմը Իրաքի դէմ, հետեւաբար կոչ կ'ուղղեն Ապահովու- թեան խորհուրդի ան- դրամ 15 երկիրներուն, որոնց շարքին՝ Միաց- եալ Նահանգներուն, հրաժարելու պատե- ռապմէն՝ պօրակցելով խաղաղ լուծման տար- բերակին:

Համմուտ նաեւ շեշ- տեց քննիչներուն հետ Իրաքի գործակ- ցութեան անհրաժեշ- տութիւնը:

Յունաստանի ար- տաքին գործոց նա- խարար Ճորձ Փա- փանտրէուի եւ Եւրո- պական խորհուրդի արտաքին քաղաքա- կանութեան յանձնա- կատար Քրիս Փէթրիի

ներկայութիւնը երէկ- ւան ժողովին եղաւ ու- շագրաւ իրադարձ- ութիւն մը, որ չվրի- պեցաւ քաղաքական դէտերու ուշադրութե- նէն: Անոնք Փա- փանտրէուի եւ Փէթր- նի մասնակցութիւնը համարեցին Եւրոպա- կան Միութիւնը - արա- բական աշխարհ ճիգե- ռու համակարգումի արտայայտութիւն մը:

Համմուտ նշեց, որ Փափանտրէու Եւրո- պական Միութեան անունով խօսք արած է, իսկ Իրաքի արտա- քին գործոց նախա- քար Նածի Մապրի ըսած է, որ Իրաք գոհ է աշխարհի տարած- քին Իրաքի հանդէպ ցուցաբերուած ծո- ղովորդային պօրակցու- թենէն՝ նշելով, որ մինչեւ օրս պաշտօ- նական ոչ մէկ կեց- ւածք յստակացած է:

**ՀՕՄԸ ԿԸ ՄԱՆԱԿՅԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ**

Հայաստանի նախագահական ընտրու- թիւներուն, որոնք տեղի պիտի ունենան 2003 թ. 19 Փետրուարին, Հայ Օգնու- թեան Միութիւնը հրաւիր ստացած է Կեդ- ընական Ընտրական Յանձնաժողովի նա- խագահ Ա. Սարգստեանին, իբրեւ դիտորդ, ոչ կառավարական կազմակերպութիւն: Ատե- նապետուի ընկ. Մարո Մինասեան պիտի ներկայացնէ Հայ Օգնութեան Միութիւնը:

«ԱԶԳԱԿ» ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

● Բիւզանդ Մետրոպեանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Մելքոն Յակոբեան 20,000 Լ. ը. Տիկին Լուսին Գափիւանեան 20,000 Լ. ը.

**ՄԵՍՐՈՊԵԱՆ
ԱՐՈՒՆԵՍԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ
ԿՄԱՆԴԱՄԱԿՅԻ**

● BRITISH COUNCIL -ին

Հիմնադրութեան 20-ամեակի հերթական նուէրը ուսանողներուն

Հայ Կաթողիկէ Մետրոպեան Արուեստից վարժարանը Փետրուար 2003-ին արձանագրու- ւեցաւ British Council-ի ELT Club-ի անդամ:

Այս անդամակցութեամբ, վարժարանը պիտի կարենայ օգտուիլ անգլիական այդ հեղինակաւոր հաստատութեան կրթական եւ կազմակերպական կարողականութենէն:

**Մի'շտ քայլ մը առջեւ.
Մետրոպեան
Արուեստից վարժարանին մէջ,
այս խոստումը
ի պօրու կը մնայ մի'շտ**

Bourdj Hammoud, Arax Street Tel: 01/260504 Fax: 01/262955
www.mesroblian.com

ՄԱՀԱԶԴ

- Տիար Գէորգ Արմէնեան
- Տէր եւ տիկին Կարօ եւ Ալլին Քիւրքեան
- Տիար Ալան Ոսկերիչեան
- Տիար Սարգիս Արմէնեան
- Տէր եւ տիկին Օհան եւ Կասիա Արմէնեան
- Տէր եւ տիկին Ատրուշան եւ Նորա Արմէնեան
- Տէր եւ տիկին Յակոբ եւ Վերենա Սարգիսեան
- Տէր եւ տիկին Զարեհ եւ Ժանէթ Սարգիսեան
- Տէր եւ տիկին Ժողէֆ եւ Մարօ Լուսթի
- Տէր եւ տիկին Սալիկ եւ Շողիկ Տիմիճեան
- եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ, ազգականին եւ հարազատին՝

ԳՈՋԵԹ ԱՐՄԵՆԵԱՆԻ (ԾՆԵԱՂ՝ ՍԱՐԳԻՍԵԱՆ)

անկնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի, 16 Փետր- ւար 2003ին, «Հարուն» հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութեան թուականը պիտի յայտա- րարուի հետագային:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՅԱԿԱՆ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ...

Անցնող շաբաթավերջը միանգամընդ- միշտ եկաւ փաստելու, որ աշխարհի ժողո- վուրդները ոգի ի բոհն դէմ են իրաքեան տագնապը պիտուրական միջոցառումով լուծելու ընտրանքին: Եւրոպայի տարածքին միլիոնաւոր մարդիկ գրաւեցին փողոցները՝ խաղաղ ցոյցերով «ոչ» ըսելով պատերազմ- անի, այլ խօսքով՝ պաշտպանելով Ֆրանսա - Գերմանիա - Ռուսիա եռակնի տեսակետը, որ բոլորովին հակառակ է ամերիկեւրի- տանական տեսակետին: Սպանիա, որուն կառավարութիւնը թեքած էր դէպի ամերիկե- ան տրամադրութեան, ծառայաւ ու պա- հանջեց վարչապետ Անարի հրաժարակա- նը: Երկու միլիոն սպանացիներ մայրաքա- ղաք Մատրիտի փողոցներուն մէջ ո'չ ըսին ամերիկեան թեքումին եւ հաւատարիմ մնա- ցին ինչ ցամաքամասի իրենց դաշնակիցնե- ռուն, զորս կը գլխաւորեն Փարիզ եւ Պերլին եւ որոնց կը ձայնակցի Մոսկուա: Անոնք կ'ըսեն, թէ պատերազմը միայն վերջին ընտ- րանքը պէտք է ըլլայ իրաքեան հարցով եւ ըստ անոնց՝ տակաւին կարելի է խնդիր լու- ծել ՄԱԿի պէնքի քննիչներուն ճամբով, բա- նակցութեան ճամբով: Վատիկան եւս այդ մե- կը հաստատեց:

Մատրիտի փողոցներուն մէջ տիրող կա- ցութիւնը կրկնուեցաւ Հոմար, Պերլինի, Փա- րիզի, Պրիսթէյի եւ Եւրոպական բազմաթիւ այլ ուսանողներու մէջ, ուր Բ. Աշխարհամար- տէն ասդին այսքան ծաւալուն պօրաշարժ տեղի չէր ունեցած, եւրոպական լրատուա- միջոցներու իսկ հաստատումով: Նոյնն էր նաեւ Մոսկուայի, Ս. Փետրոսպոլի, Աւստ- րալիոյ տարբեր շրջաններու, լատին ամե- րիկեան ու ծայրագոյն արեւելեան բազմա- թիւ քաղաքներու պարագային:

Խնդրոյ առարկայ Միացեալ Նահանգներ եւս անմասն չմնացին այս պօրաշարժին: Նիւ Եորքի, Լոս Անճելըսի, Շիքաքիոյ եւ այլ քա- ղաքներու մէջ հոծ բազմութիւն մը կ'ընդդի- մանար նախագահ Պուշի քաղաքականու- թեան, մերժելով երկրորդ Վիթնամ մը, պա- հանջելով խաղաղութիւն: Ըստ «Եւրո- նիուպ»-ի, 1960էն ի վեր նման մեծաթիւ ցոյց տեղի չէր ունեցած Ամերիկայի տարածքին: Իսկ Ուաշինկթընի դաշնակից Լոնտոնի փո- ղոցները կ'ենային, ուր բրիտանացիք աւելի քան երկու միլիոն հոգիով կը պահանջէին հրաժարիլ պատերազմի տրամադրութենէն ու իրենց ղեկավարին՝ Թոնի Պլեյրի ուղղե- լով իրենց խօսքը կը բացազանջէին. «Այ կը բաւէ»:

Այս հոյովոյթին մէջ, սակայն, ամենէն ընդվզեցուցիչն ու միանգամայն անհասկը- նային արաբական աշխարհի քար լոռու- թիւնն է: Բացի Սուրիոյ եւ Լիբանանի (բնա- կանաբար նաեւ Պաղեստին) տարբեր քա- ղաքներու մէջ տեղի ունեցած ուշագրաւ ու մեծ ցոյցերէն, ինչպէս նաեւ քանի մը արա- բական քաղաքներու մէջ անջան ու երկ- ջոտ հաւաքներէ, արաբական աշխարհի տա- րածքին այլ տեղ ձայն չբարձրացաւ տարօ- ռինակօրէն: Ի՞նչպէս կարելի է չդատապար- տել նման անդիմազիծ ու վախկոտ, աւելի'ն՝ ապագային տրամադրութիւն: Արաբ եղբոր՝ Իրաքի հողային ամբողջականութեան ի խնդիր պաշտպանութիւնը միայն Դամասկոս- ւի ու Պէյրութի պարտականութիւնն է: Հա- մարաբական շահեր գոյութիւն չունի'ն, թէ ոչ անոնց այլ պաշտպանութիւնը միայն Լի- բանանի ու Սուրիոյ ճիտին պարտքն է: Ինչ- չո՞ւն այսքան կրաւորական կեցուածք ցուցա- բերել, մասնաւորապէս արաբաշխ աշխարհի կ'ընդդիմանայ Իրաքը հարուածելու անար- դար ընտրանքին: Ի՞նչպէս կարելի է ձեռ- նածալ ու լուռ մնալ եղբոր մը մահուան վտանգին ի տես, երբ անդին օտարը կը փու- թայ օգնութեան, յանուն մարդկային արդար- լութեան:

Սթափեցէ՛ք, արաբներ, ու միացէ՛ք Մատ- րիտի, Պերլինի, Սիւնիի, Նիւ Եորքի, Դա- մասկոսի, Պէյրութի (ինչպէ'ս վերջակէտ դնել) միլիոնաւոր ցուցարարներուն, միաս- նաբար մերժելու արաբ եղբոր դէմ նիւթուող դաւը, յանուն արաբական աշխարհի արժա- նապատութեան, ի խնդիր համաարաբա- կան շահերուն, յանուն խաղաղ ու արժանա- պատիւ կեանքի:

ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Զարուհի Յովսէփեան եւ զաւակուներ
- Տիկին Արաքսի Յովսէփեան
- Տէր եւ տիկին Սալիկ Հերկելեան
- Տէր եւ տիկին Դաւիթ Սեֆէրեան
- Տէր եւ տիկին Պօղոս Քիւրտեան
- Տէր եւ տիկին Հայկ Քիւրտեան
- եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուս- նոյն, հօր, զաւակին, եղբոր եւ հարազատին՝

ՐԱՅՖԻ ՅՈՎՍԵՓԵԱՆԻ (ԾՆԵԱՂ՝ 1945ԻՆ)

Մահը, որ պատահեցաւ Շարաթ, 15 Փետրուարին, «Մաքր Բէօր» հիւանդանոցին մէջ:

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ Կիրակի, 16 Փետրուարին, Այնճարի Հայ կաթողիկէ եկեղեցիին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Այնճարի գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԺԸՆԵՒ ՄԵԿՆԵՑԱՒ

Շաբաթ, 15 Փետրուարին, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս մեկնեցաւ ժընեւ, նախագահելու համար Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի Գործադիր Վարչութեան ժողովին: Պիտի քննարկուին խորհուրդին վարչական ու յատկապէս տնտեսական կացութեան կապուած հարցեր: Գործադիր Վարչութիւնը այս հանդիպման ընթացքին պիտի վերադի նաեւ այն հարցերով, որոնք առնչուած են յառաջիկայ համաժողովին, որ տեղի պիտի ունենայ 2007 թուականին: Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի քաղաքական կեցումները ճշդումի ծիրէն ներս, քննարկումի նիւթ պիտի դառնայ Իրաքի դէմ պատերազմի նախապատրաստութեան մթնոլորտը:

Այս շաբաթուան կիսուն, վեհափառ հայրապետը պիտի վերադառնայ Անթիլիասի մայրավանք:

ԹՈՒՐՔ

ՎԱՐՉԿԱՆՆԵՐ ...

Շարունակուած Ա. Էջեց

րուն, որ ռուսամէտ չեչէն ոստիկաններու դէմ յարձակումները դադարեցնեն:

ԱՖՓի ղրկուած վիտեո - երկու մը մէջ, Արսանով դիտել տուած է, որ շատեր «այս գործին ձեռնարկած են, որովհետեւ չեն կրցած ապրուստի այլ միջոց գտնել: Այսօր, բարոյական իրաւունք չունինք մէկը միւր բնաջնջելու», ըսած է ան:

Ըմբոստներուն մեծամասնութիւնը ռուսական իշխանութիւններուն հետ գործակցող չեչէնները դաւաճաններ կը նկատեն եւ հետեւողականօրէն յարձակումներու կը ձեռնարկեն անոնց դէմ:

Մինչ այդ, ռուսական ուժերը Շաբաթ օր Չեչենիոյ երկրորդ մեծագոյն քաղաքին Կուտերմէսի մօտ 1200 քվ. պայթուցիկ նիւթերով լեցած բեռնատար փոխադրակառք մը գտած են:

Ըստ պաշտօնատարի մը ենթադրութեան, պայթուցիկ նիւթերը պէտք է պայթէին Մարտ 23ին կայանալիք վիճելի հանրաքուէին ընթացքին:

(ԱՖՓ)

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Ս. Սարգիս Վորավարի տունին առիթով, երէկ, Կիրակի 16 Փետրուարին Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. պատարագ, ձեռամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչէրեանի:

Գ ե ղ ա մ սրբազան առաւօտեան ժամը 9:00ին դիմաւորուեցաւ



Սրբազան հայրը իր քարոզից պահուն



Մատաղի օրհնութիւն (Լուսանկարները՝ Սթիտիօ ԱՇՆԱԿԻ)

Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ մասնաճիւղի սկստներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորահունքին կողմէ, որ հնչեցուց Հայաստանի եւ Լիբանանի քայլերգները: «Արագած» սկստներին մէջ տեղի ունեցած ընդունելութիւնը սրբազան հայրը ուղղուեցաւ եկեղեցի, որուն մուտքին կատարուեցաւ ոչխարի պէտում:

Գեղամ եպս. Խաչէրեան իր քարոզին մէջ լուսարձակի տակ առաւ հոգիին եւ մարմինին սպանութիւնը: Ան նշեց, թէ Ս. Սարգիս բնաւ չէր կախարհ մարմնի կորուստէ, եւ աւելցուց, թէ վեհ ու Վորավար անհատները բնորոշութեամբ չեն չունին այս երկիրը:

Առաջնորդը ըսաւ, թէ մարմինը սպաննել չի նշանակեր հոգիի կորուստ, այլ ընդհա-

կառակը, հոգիին սպանութիւնը շատ արագի ահաւոր եւ ցարալի է եւ կարելի չէ դարձանել ոչ մէկ ձեւով:

Ապա անդրադառնալով մարդոց ներկայ առօրեային՝ ան ըսաւ, թէ պէտք է պահպանել առարկայական բաժինը ենթակայականութեամբ, բարոյական պէտք է մնալուն կերպով վեր պահել այլ սկզբունքներէ եւ կառչիլ անոր: Գեղամ սրբազան նշեց, թէ

հոգեկանին, ազգային ու հոգի ու միտք անուցանող արժէքները պէտք է պահպանել եւ երբեք չվիճիլ անոնցմէ, որովհետեւ անոնցմէ ետդարձ կատարելը կրնայ վանահատները բնորոշութեամբ չեն չունին այս երկիրը:

Ս. պատարագի աւարտին տեղի ունեցաւ մատաղ օրհնէք:

السيرة

السيرة

السيرة

Ի՞ՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

السيرة

السيرة

السيرة

السيرة

السيرة

Տեղական մամուլը իր 15 Յունուարի տակ առած է ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին ներկայացուած Պլիքսի եւ Պարատի տեղեկագիրը եւ Իրաքի տագնապին վերջին պարզացումները:

«Նահար» գրած է, «600 քաղաքներ բողոքի ցույցի կը դիմեն Իրաքի պատերազմին դէմ, իսկ Պլիքս եւ Պարատի նոր տեղեկագիր մը կը ներկայացնեն Մարտի սկիզբը: Միջազգային խիտընդիմութեան պատճառով պատերազմը յետաձգուեցաւ: Ապահովութեան խորհուրդին մէջ աննախընթաց երեւոյթ՝ Ֆրանսայի եւ Ռուսիոյ խօսքերը արժանացան ծափահարութիւններու»:

«Տիար»-ի համաձայն, ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը լսեց Պլիքսի եւ Պարատի իրական տեղեկագիրները: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը յայտարարեց. «Ներկայիս ոչ մէկ պատճառ գոյութիւն ունի Իրաքի դէմ ուժի օգտագործումը արդարացնող»:

Շարէի յայտնեց. «Մեզ կը խրատեն խաղաղ միջոցներով լուծելու Իսրայիլի հետ տագնապը, իսկ իրենք

կը դիմեն պատերազմի ընտրանքին»:

«Մուսթափալ» նշած է, թէ Ֆրանսա կը հաստատէ, թէ ներկայիս գոյութիւն չունի արդարացի ոչ մէկ փաստ, որ կ'արտօնէ ուժի գործածութիւնը: Ամերիկեան պատերազմը Ապահովութեան խորհուրդին մէջ ընդդիմութեան բախեցաւ, նշած է օրա-

թերթը: Ըստ թերթին, Մուսթափալ յայտնեց, որ արաբները ներկայիս մէկ կողմ դնեն իրենց տարակարծութիւնները: Եգիպտոս կոչ կ'ուղղէ արտակարգ վեհաժողովի մը 22 Փետրուարին, Շարմ էլ Շեյխի մէջ:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Պլիքսի եւ Պարատի տեղեկագիրը կասկածներ կը ներկայացնեն Փառլըի փաստերուն շուրջ, իսկ Ալիյ Միացեալ Նահանգները փոքրամասնութիւն կը նկատէ միջազգային ընտանիքին մէջ:

Թերթը նշած է, թէ Ապահովութեան խորհուրդին մէջ Միացեալ Նահանգները մեծ հարուած ստացան: «Խաղաղութեան խմբակցութիւնը» կը շեշտէ քննիչներուն աշխատանքին շարունակման անհրաժեշտութիւնը եւ կը մերժէ պատերազմի ընտրանքը, գրած է օրաթերթը:

Ըստ թերթին, Քաֆաֆի պիտի չմասնակցի արաբական վեհաժողովին, որովհետեւ ըստ իրեն յիշեալ նախաձեռնութիւնը «անհեթեթ փորձ մըն է արաբներու արժանապատուութիւնը պահելու համար»:

«Անուար» գրած է, թէ քննիչներու տեղեկագիրը ունկնդրելու ետք մեծամասնութիւնը դէմ կեցաւ Միացեալ Նահանգներուն:

Ըստ թերթին, Շարէի յայտարարած է, թէ քննիչներուն մէջ իրագործում արձանագրեցին, եւ թէ պատերազմը պիտի առաջնորդէ խառնակ իմաստով: Ֆրանսա նշեց, թէ քննիչներուն վերջին արդիւնքներ կու տան եւ ոչ մէկ

դրոյապատճառ կայ պատերազմի սկսելու, իսկ Մոսկուա անդրադարձաւ այն երեւոյթին, թէ ճիշդ քայլեր կ'առնուին դեպի խաղաղութիւն:

«Սաֆիր» գրած է, թէ երկվեկուր յառաջացաւ Պլիքսի եւ Պարատի տեղեկագիրներէն ետք եւ Շարէի կը վստահեցնէ պատերազմի ահաւոր հետեւանքներէն: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին մէջ Ռուսիան կը շինկըն ապտակ ստացաւ: Ֆրանսայի, Ռուսիոյ, Չինաստանի, Գերմանիոյ, Մուրիոյ, Մեքսիքոյի, Չիլիի, Փաքիստանի, Անկոլայի, Քամերունի, Կինէայի համաձայնագրածակցութիւնն ու միակամութիւնը կը մեկուսացնէ Փառլըն եւ Սթրոն:

Տեղական լուրերու կարգին թերթերը լուսարձակի տակ առած են նախագահ Լահուտի եւ վարչապետ Հարիրիի հանդիպումին, որուն ընթացքին անոնք քննարկեցին Իրաքի հարցը եւ տեղական ու շրջանային վերջին պարզացումները:

Ըստ «Տիար»-ի, Լահուտ յայտարարած է, թէ ապապինուելու առնչութեամբ Իրաքի որոշումը յառաջիկայ մուտեան քայլ մըն է:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, ամբողջական լուրերուն Լահուտի եւ Հարիրիի հանդիպումին առնչութեամբ:

Պաղեստինեան ընտրութիւններուն մասին «Մուսթափալ» գրած է, թէ Միացեալ պաշտօնապէս կը յայտարարէ վարչապետ մը նշանակելու իր որոշումը: Գլխաւոր թեկնածուներն են՝ Ֆայյատ, Ապու Մապի, Ապու Ալլա, Հասան եւ Քալուտ:

Ը. Բ. Ը. Մ. ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ՀԱՍԱՆՍԵՐՈՒ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիւթ ԵՐԻԿԱՄԱՅԻՆ ԵՒ ՄԻՋԱՆՅՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Դասախօս՝

ՏՈՔԹ. ՉԱՐԵՎ ԳԱՍԱՐՃԵԱՆ

(GENITO-URINARY SURGEON)

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 25 Փետրուար 2003, Երեկոյեան ժամը 8:00ին, Ը. Բ. Ը. Մ. ի «Երուան» եւ Ալիս Տեմիրճեան» կեդրոնի մէջ, Նաքաշ, 5րդ յարկ:

ՇԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՇՐԱԻՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը լիբանանահայ քուէարկողներուն կը տեղեկացնէ, թէ նոր քուէարկողներու անուանացանկեր (լուսնի շաքար) իրապարակուած են ներքին գործոց նախարարութեան կողմէ: Այն քաղաքացիները, որոնք երեսփոխանական վերջին ընտրութիւններուն չկրցան քուէարկել՝ անուանի կամ այլ սխալի պատճառով, նախարարութեան որոշումով իրաւունք ունին մինչեւ 5 Մարտ 2003 կատարել սրբագրութիւններ:

Սրբագրութիւններ եւ ստուգումներ կատարելու համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Շաղոյեան» մշակութային կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01-259881, 01-242582:

Դիմողները պարտին իրենց հետ ունենալ իրարած քայտի լուսապատճէն մը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

NOAH'S ARK ART GALLERY

Կը ներկայացնէ

ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԶՈՎՍԷՓ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ

Հովանաւորութեամբ

ՊՐ. ԳԵՂՈՐԳ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԻ

Յուցահանդէսին հասոյթը պիտի տրամադրուի «ԱԶԳԱԿ»-ի ֆոնտին

ՎԱԼԵՐԻՆ ՍԻՐԱՅՈԺԱՐ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Ե ԳԵՂԱՆԿԱՐԻՉԻՆ

Յուցահանդէսը պիտի շարունակուի մինչեւ Երկուշաբթի, 24 Փետրուար 2003, ամեն օր, առաւօտեան ժամը 11:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00ը:

ՇՐԱԻՐ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ

Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի մէջ գործող Պուրճ Համուտի Առաջին Հանրային գրադարանը ծրագրած է հաստատել Լիբանանի գաղութներու կատարող զանազան նախաձեռնութեանց մասին յատուկ արխիւային բաժանումը մը, ուր պիտի կեդրոնացան տարբեր միութիւններու, հիմնարկներու եւ հաստատութեանց գործունէութեան առնչող եւ այդ գործունէութեան արտայայտութիւնը եղող նիւթեր:

Առ այդ, կը խնդրենք շահագրգռուող բոլոր հաստատութիւններէն եւ կազմակերպութիւններէն իրենց կազմակերպած ձեռնարկներուն հետ կապուած որեւէ հին կամ նոր փաստաթուղթ (փոսթքը, իրաւեր, պոռչիւր, թերթ եւ այլն) 2 օրինակով յանձնել Հանրային գրադարանի տնօրէնութեան:

Տարիներ ետք, այս հաւաքածոն մեծ նպաստ պիտի ըլլայ գաղութին պատմութեան համար:

Մեծապէս կը գնահատենք լիբանանահայ մեր միութիւնները իրենց գործակցութեան համար:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԱԿՆԱՐԿ

ԱՆՈՐՈՇԻ ՈՒ ԱՆՅԱՅՏԻ ՎՏԱՆԳԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՐՉԱԻԻ ԱՔԻԼԼԵՍԵԱՆ ԿՐՈՒՆԿԸ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ԶՏՈՒՈՂ ԿՐԲՈՏ ԶԱՐԴՉՈՒԹԻՒՆՆ Ե

Միայն համրուած օրեր մնացած են Հայաստանի ցախագահական ընտրութեան եւ, այսուհանդերձ, տակաւին զփուար Է ճշգրտօրէն ըսել, թէ քաղաքական ի՞նչ ուղղութիւններու միջեւ ընտրանք պիտի կատարէ մեր ժողովուրդը:

Ճիշդ է, նախագահական թեկնածուներու առատութիւն կայ եւ, որոշապէս, կարելի է խօսիլ տարբեր կարգի անհատականութեանց միջեւ ընտրանք ունենալու ընտրազանգուածի լայն հնարաւորութեան մասին:

Բայց նոյնը կարելի չէ ըսել՝ երկրի, պետութեան եւ ժողովուրդի վաղուան կեանքը այս կամ այն ուղղութեամբ հունաւորելու առումով, տարբեր ուղեգիծներու միջեւ ընտրանք կատարելու մեր ժողովուրդին հնարաւորութեան մասին:

Պարզ ու որոշ է, անշուշտ, գլխաւոր թեկնածուին՝ գործող նախագահի վարքագիծը, հնգամեայ պաշտօնավարութեամբ անոր որդեգրած ուղեգիծը: Իսկ մնացեալ թեկնածուներու պարագային, անորոշ ու անյայտ է անոնց մեծամասնութեան առաջադրած այլընտրանքը:

Այդ պատճառով ալ ընտրարշաւը բեւեռացած է մէկ կողմէ գործող նախագահին զօրակցելու եւ միւս կողմէ անոր ընդդիմանալու, այլ ոչ թէ այլընտրանք ներկայացնող թեկնածուներ պաշտպանելու կեցուածքներու միջեւ:

Ընտրարշաւի քարոզարշաւը փաստօրէն այնքան անճակակցաւոր ու կրքոտ դրսեւորումներով կ'ընթացայ, որ մրցակից թեկնածուն՝ յատկապէս գործող նախագահը վարկաբեկելու, բայց նաեւ եւթադրաբար միեւնոյն՝ ընդդիմադիր նախաձեռնման կազմող մրցակիցները խժբժելու մոլուցքը փոխարինած է քաղաքական վարքագիծներու եւ կատարման ուղեգիծներու միջեւ մրցակցութիւնը:

Նոյնիսկ ընտրազանգուածին ցուցաբերած շեշտակի եւ ողջունելի աշխուժութիւնը, ինչպէս եւ առկա ընկերային-տնտեսական ծանր պայմանները դիմագրաւելու համար որոշակի պատասխաններ ստանալու անոր պնդումները արդէն բաւարար չեն զգաստութեան հրաւիրելու կրքոտ քարոզարշաւը:

Եթէ փորձենք շուրջ տարւոյն ցախագահական թեկնածուները դասակարգել ըստ իրենց ունեցած քաղաքական ուղղութիւններուն՝ մեկնելով իւրաքանչիւրի քարոզարշաւին նամբով ընտրազանգուածը յուզող հիմնահարցերու տրուած պատասխաններէն, դժուար թէ կարեւոր տեղ հասնիլ: Մանաւանդ որ բացառութեամբ գործող նախագահին եւ պետական բարձրագոյն պաշտօններ վարած մէկ կամ առաւելագոյնը երկու նախագահական թեկնածուներու, մնացեալները չունին ընտրազանգուածը յուզող հիմնահարցերու տրուած պատասխաններէն, դժուար թէ կարեւոր տեղ հասնիլ: Մանաւանդ որ բացառութեամբ գործող նախագահին եւ պետական բարձրագոյն պաշտօններ վարած մէկ կամ առաւելագոյնը երկու նախագահական թեկնածուներու, մնացեալները չունին ընտրազանգուածը յուզող հիմնահարցերու տրուած պատասխաններէն, դժուար թէ կարեւոր տեղ հասնիլ:

Իսկ նախագահական ընտրութեան դիմող ժողովուրդը իրաւունք ունի ընտրանք կատարելու երկիրն ու իր կեանքը յուզող հիմնական խնդիրներուն լուծում առաջադրող ուղղութեանց միջեւ: Որքան ալ թեկ-

նածուներու անճ ու անհատակա-նութիւնը կարեւորութիւն ներկայացնեն, բաւարար չեն՝ քաղաքական ուղղութիւն ընտրելու առումով:

Նախագահական ներկայ ընտրապայքարը հունաւորող քարոզարշաւը չ'օգնէր, որ ընտրազանգուածը ստուգապէս գիտնայ, թէ իր վստահութեան քուէին դիմող ընդդիմախօս թեկնածուներէն իւրաքանչիւրը ի՞նչ պէս կը պատկերացնէ յատկապէս երեք հարցերու լուծումները: Արցախի հարցին արդար կարգաւորումը, երկրի ընկերային-տնտեսական տագնապին դարմանումը, պետական վարչամեքենան հիւծող փտածութեան յաղթահարումը:

Գործող նախագահի հնգամեայ պաշտօնավարութեան ընթացքին գործողութեան քաղաքականութեամբ՝ երեք հիմնահարցերն ալ շատոնց անդին անցած են ընդհանուր եւ ամբողջական կարգախօսներու սահմանագիծէն:

Արցախի խաղաղ ու բանակցային կարգաւորման միջազգային գործընթացը ամէն կարգի նշումներու տակ կը պահէ Հայաստանը եւ վաղուան Հայաստանի նախագահը պէտք է կարեւոր մեր ժողովուրդը համոզել, թէ ինք ունի այդօրինակ նշումները դիմագրաւող եւ հայութեան շահերուն պաշտպանութիւնը երաշխաւորող լուծումներու բանալին:

Ընկերային-տնտեսական տարբերոյթ մեր դժուարութիւններուն դարմանումը առաջահարցաբար կը պահանջէ արտադրողականութեան խթանումը եւ աշխատատեղերու ստեղծումը, իսկ այդ առումով ազատ շուկայական տնտեսավարման դեղատոմսերը անօգուտ դարձած են: Հետեւեալ արդէն կիրարկուող որոշակի դեղատոմսերուն նոյնքան որոշակի այլընտրանքներ ներկայացնելու հարկին տակ են նախագահական թեկնածուները:

«Քանի տարի է, անհ, որ ընդհանուր պահանջի վերածուած է փտածութեան դէմ պետականօրէն պայքարելու հրամայականը: Բայց երբ փտածութիւնը ստացած է համապարփակ տարողութիւն, անոր յաղթահարման համար բնականաբար անհրաժեշտ են համալիր լուծումներ, որոնք մասին ընտրազանգուածը յատկապէս պատկերացում կը սպասէ նախագահական թեկնածուներէն:

Այսօրուան ընտրարշաւը, յատկապէս կրքոտ քարոզչութեան իր դրսեւորումներով, պատասխաններ չունի այս բոլորին: Ընդհանրական՝ անորոշ ու անյայտ գալիքի անճկութեան կը մատնէ ընտրազանգուածը, որ իր մեծամասնութեամբ արդէն կ'ապրի անճուկ պայմաններու մէջ, բայց որ իր մէջ բաւարար ուժ գտած է, որպէսզի քաղաքական եւ քաղաքացիական աշխուժութիւն դրսեւորէ նախագահական ընտրութեանց առիթով՝ երկրի ու վաղուան սերունդներուն հաշուոյն ճիշդ ընտրութիւն կատարելու հաստատակամութեամբ:

Նախագահական ընտրապայքարի քարոզարշաւը իրաւունք չունի անտեսելու ընտրազանգուածին սպասումները:

«ԳՐՕՇԱԿ», 2003, Փետրուար

ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՄՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՇԱՀԱՆ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՀԵՏ

Սփիւռքահայ մեր կեանքի բազմերես ու բազմատեսակ համայնքներուն կամ թեմերուն ծանօթանալու առաջադրութեամբ, մեր ընթերցողներուն կը ներկայացնենք պատմական Պարսկաստանի, արդէ Իրանի իսլամական Հանրապետութեան իրանահայ թեմերէն Սպահանի հայոց թեմը:

Այս առնչութեամբ հետակայ հարցազրոյց մը ունեցանք թեմի առաջնորդ Շահան Ծ. Վրդ. Սարգիսեանի հետ:

Հ.- Հայր սուրբ, հանցեք՝ մեր ընթերցողներուն ներկայացնել ձեր հոգեւոր խնամքին յանձնուած Սպահանի հայոց թեմը:

Պ.- Առաջին հերթին շնորհակալութիւն կը յայտնեմ եւ կը շնորհակալուիմ «Ազգայն» օրաթերթը, այս գեղեցիկ նախաձեռնութեան համար:

Սպահանի հայոց թեմը պատմական հայկական այն համայնքն է, որ հաստատուած է 1604-1606 թուականներուն Սպահանի կամ Իսֆահանի հարաւարեւմտեան շրջանին մէջ, Ջալանտերուտ գետի կողքին: Հայ համայնքը գլխաւորաբար Նախիջեւանի Ջուլֆա-Ջուղա քաղաքէն էր, այդ պատճառով ալ նոր բնակավայրը կոչեցին Նոր Ջուղա, հինի յիշատակով, իր հոգեւոր-մշակութային ու ազգային-վարչական կեդրոնով՝ Ս. Ամենափրկիչ վանքով:

Մեր թեմը ընդհանրապէս ծանօթ էր Իրանահայրկաստանի Հայոց թեմ կոչուածով, եւ իրողապէս թեմական իշխանութիւնը կը տարածուէր մինչեւ Հնդկաստան եւ Արեւելք: Այսօր, ազգային թէ պետական ճանաչումով կը կոչուի Սպահանի եւ Հարաւային Իրանի հայոց թեմ, կարճ ու գործնական բացատրութեամբ՝ Սպահանի հայոց թեմ:

Հ.- Այսօր Սպահանի թեմը որքան հայութիւն կը հաշուէ:

Պ.- Սպահանի թեմը 400 տարուան պատմական կենսք եւ հոգեւոր ու մշակութային առաքելութիւն ունեցող թեմ է: Դարերու ընթացքին ժողովրդային տեղաշարժեր կատարուած են տարբեր պատճառներով եւ, բնականաբար, համայնքի թիւն ալ աստիճանաբար նուազած է:

Այսօր Սպահանի եւ Հարաւային Իրանի տարբեր շրջաններուն մէջ գտնուող հայութիւնը մօտաւորապէս 10 հազար հոգի կը հաշուենք:

Հ.- Ձեր թեմին կեդրոնը Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքն է: Ազգային կեանքն ու առաջնորդարանը ինչպիսի կառոյց ունի:

Պ.- Ս. Ամենափրկիչ առաջնորդանիստ պատմական վանքը տեղական ու միջազգային շրջանակներուն ծանօթ է վանք անուանով: Առաջնորդարանը նոյնիսկ վանքին մէջ է կամ վանքն իսկ է: Առաջնորդարանը իր կառոյցով ու կազմով պետական ճանաչում ունի եւ յայն Իրանի իսլամական Հանրապետութեան եւ Սահմանադրութեան 13րդ յօդուածի՝ թեմին ամբողջական տէրն ու պաշտօնական ներկայացուցիչն է:

Սպահանի հայոց թեմը ունի հետեւեալ կառոյցը: Թեմական առաջնորդը (թեմի հոգեւոր պետն է), Պատմաւարական ժողովը (թեմի օրէնսդիր դերագոյն ժողովն է), Թեմական խորհուրդը (թեմի գործադիր բարձրագոյն մարմինն է) եւ կրօնական խորհուրդը (թեմի կրօնական գործերու գործադիր մարմինն է): Այս խորհուրդներէն յետագայ կը գան բազմաթիւ մարմիններ, յանձնաժողովներ եւ յանձնախումբեր, որոնցմէ՝ կրթական-մշակութային, կալուածատնտեսական, եկեղեցեաց վարչութիւն, եւ բարեսիրական միութիւններ: Անոնք եւս, իրենց կարգին, ունին ենթակայ մարմիններ, որոնք աւելի սեղմ ու կեդրոնացած աշխատանքներ կը կատարեն համայնքի կեանքի բազմաթիւ ոլորտներու կամ մարգերու մէջ: Տարած աշխատանքներուն գեկտրումը, քննարկումը, քննադատութիւնն ու գնահատումը կամ արժեւորումը, ինչպէս նաեւ յաջող տարիներու ծրագիրներու մշակումը կը կատարուի պատգամաւորական հաշտութեան եւ հերթական ժողովներուն մէջ:

Հ.- Ձեր թեմը տնտեսական առումով ինչպիսի վիճակ կը ներկայացնէ: Ինքնաբաւ է, թէ ոչ:

Պ.- Առանց տնտեսական վերլուծումներ կատարելու, բոլոր ալ գիտենք, որ այսօրուան աշխարհի «քրոնիկ հիւանդութիւններէն» գլխաւորը տնտեսական քաոսային վիճակն է, եւ անոր սարսփելի հետեւանքներն ու աւերները ամէնքս ալ կ'ապրինք ու կը գգանք ամէն օր: Իրանի հասարակական կեանքին երկու հիմնական գոտարուութիւններն են՝ աշխատանքի եւ բնակարանի ապահովում: Մեր թեմը եւս անմասն չէ ընդհանուր տագնապէն: Մենք մեր կարողութեան չափով կը փորձենք յատուկ ուղղութիւններ հարձնել ընկերային ծառայութեան բնագավառին ներս, յատկապէս՝ այս երկու մարգերուն մէջ: Թեմական խորհուրդը գործնապէս կը ծրագրէ եւ կը ջանայ տարբեր ձեւերով աջակցիլ համայնքի անդամներուն: Գնահատելի աշխատանք կը տանի Բարեսիրական մարմինը՝ բժշկական աջակցութիւն եւ աղքատախնամի վերաբերող իր ձեռնարկներով: Այս իրականութեան վրայ աւելցուցէք հայեցի ու քրիստոնէական դաստիարակութեան համար բազմաթիւ ծրագիրներու իրականացման անհրաժեշտութիւնն ու անոր առնչուող դժուարութիւնները, գլխաւորաբար հայ դպրոց պահելու լուրջ տագնապը, եւ դուք կ'ունենաք տնտեսական բարդ վիճակ մը: Այսուհանդերձ, ուրիշութեամբ ըսենք, որ համահայկական տարողութեամբ կատարուող ազգօգուտ ծրագիրներուն մեր նիւթաբարոյական մասնակցութիւնը բերած ենք եւ կը շարունակենք բերել մեծ գոհողութիւններով:

Հ.- Ձեր թեմը քանի հայկական վարժարաններ ունի: Ի՞նչ դժուարութիւններ ունի: Ուսումնական ծրագիրն ու արդիւնքները լաւ են: Անոնք կը համապատասխանեն պետական ուսումնական համակարգին ու մակարդակին:

Պ.- Մեր թեմի ուղղութեան ամենազխաւոր կէտը դաստիարակութեան վրայ է: Մեր համայնքը յատկապէս Նոր Ջուղայի, Շահինշահի, Ահուազի եւ Շիրակի մէջ կեդրոնացած է: Ունինք կրթական խորհուրդ, որ տեղւոյն պետական ծրագիրին հետ համադրելով, մեր նոր սերունդին ուսումնական-կրթական դաստիարակութեան նուիրական աշխատանքին լծուած է: Գործնական աշխատանքները կը կատարուին հայ տեսուչներուն (պետական ներկայացուցիչներ ունինք), ուսուցչական կազմերուն եւ ծնողական խորհուրդներուն կողմէ: Հայ դպրոցը իւրաքանչիւր շրջանի մէջ որպէս մէկ ամբողջութիւն կը ներկայանայ, սակայն օղակներու թափնուած (մասնկապարտէզ, նախակրթարան, տարրական, ուղեցոյց եւ միջնակարգ) իրրեւ առանձին հաստատութիւններ: Առաւել, տղոց եւ աղջիկներու անըտ բաժիններ, պետական օրէնքին համաձայն: Ունինք Հայրենագիտական մասնաւոր դասընթացներ: Ընդհանուր պատկեր. Նոր Ջուղա՝ վեց դպրոց, Շահինշահ՝ երեք դպրոց, նաեւ ուրբաթօրեայ հայերէն-կրօնի դասապահներ՝ միջնակարգի համար: Միւս շրջանները միօրեայ դասապահներ ունին: Արդիւնքները ընդհանրապէս գոհացնող են: Դժուարութիւնները բազմաթիւ են՝ դասագիրքի, ուսուցիչի, շէնքերու նորոգութեան եւ արդիական միջոցներու օգտագործումի: Այստեղ ուրիշութեամբ յայտնենք, որ Արամ Ա. վեհափառի նախաձեռնութեամբ, այս օրերուն, Անթիլիասի մէջ տեղի ունեցող կրթական խորհուրդներու խորհրդակցական հանդիպումները մեծապէս նպաստելու են թեմերու հայեցի դաստիարակութեան համակարգուած աշխատանքներուն, որուն մեր թեմը իր գործօն մասնակցութիւնը բերաւ:

Հ.- Ձեր թեմի մշակութային կեանքը ի՞նչ վիճակ կը ներկայացնէ:

Պ.- Մեր թեմը, ի տարբերութիւն շատերուն, հոգեւոր, կրթական ու մշակութային անցեալ, պատմութիւն եւ ներկայ, իւրայատկութիւն ունեցող թեմ է: Քանի մը օրինակ յիշենք պատմութենէն. Ս. Ամենափրկիչն ամենախնամալիցն էր, որ Միջին Արեւելքի ու մասնաւոր Իրանի առաջին տպարանը հիմնուած է իրաւատուր վրդ. Կեսարացիի ջանքերով: Նորուղայեցի հոգեւորականներու՝ Յակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի, Ռոկան Վրդ. Երեւանցիի, եւ Ջուղայեցի վաճառականներու նիւթական աջակցութեամբ է, որ 1666ին Ամսթերտամի մէջ առաջին հայերէն Աստուածաշունչ մատենար տպարանը բացուեցաւ: Նոր Ջուղայեցի մշակութի պատմութեան մէջ ձեռագրական, մանրանկարչական, գորգագործական, աստեղագործական հսկայական ներդրումներ ունեցած է: Ջուղայեցիները բազմաթիւ եկեղեցիներ կառուցած են որմնակարգի ու քանդակների պատրաստած են՝ 1604 թուականին սկսելով (այսօր, միայն Նոր Ջուղայի մէջ, ունինք 13 կանգուն ու գործող եկեղեցիներ): Անցալիս, ինչպէս ծանօթ էք, ջուղայեցիները ձեռնհաս վաճառականներ եղած են, եւ ասիկա այն պատճառով, որ վաճառականական բարձրագոյն դպրոց եւ լայն յարաբերական փորձառութիւն ունեցած են:

Նոր ժամանակներուն համար, ունինք «Արարատ» մարզամշակութային կեդրոնը իր յարմարութիւններով եւ ձեռնարկներով, յատկապէս՝ Մշակութի շարժումն է: Երեք երգչախումբեր՝ «Կոմիտաս», «Տաթև», եւ «Նարեկ»: Թատրոն: Հոգեւոր լսարաններ: Ունինք հրատարակչութիւն եւ «Նոր Ջուղայ տեղեկատու» (աւստիք 16 էջ):

Այստեղ նաեւ կ'ուզեմ յիշել, որ հայ հոգեւոր մշակութի հանդէպ մեր թեմի զգալուն եւ գիտակից վերաբերմունքին իբրեւ արտաստուութիւն, առաջին թեմը ըլլալով, վերջերս Անթիլիասի մէջ հրատարակուած կոթողական եզակի գործէն՝ Բարձրբերդի Աւետարանէն, պատրաստուած նմանահանութեան, օրինակ մը գտած ենք եւ գետեղած վանքի թանգարանին մէջ, մեր համայնքին եւ օտար այցելուներուն ծանօթացնելու այս եզակի գանձը:

Հ.- Ձեր թեմի ընդհանուր պատկերը ամբողջացնող ի՞նչ ըսելիք ունիք:

Պ.- Մեր թեմը ունի իր միութիւնները՝ Փերիոյ եւ Չհարմահայի, Հայ կանանց Գթութեան (Կարմիր խաչ) եւ Բարեգործական: Ունինք գիշերօթիկը (Որբանոց), որ բարեբախտաբար այժմ այժմ ծրագրուած համար օգտագործելի է: Կարմիր խաչի Ազգային ծերանոցը, ուր կը խնամուին համայնքին այեւորները, եւ որ շատ լաւ կազմակերպուած է Կարմիր խաչուհիներու աշխուժ գործունէութեան շնորհիւ:

Հ.- Որքան ատենէ ի վեր թեմի առաջնորդն էք:

Պ.- Ինչպէս իմացած կ'ըլլաք, ու՞ր՞ք ամիսներ առաջ Սպահանի հայոց թեմի Առաջնորդական տեղապահ ընտրուեցայ եւ հոգեւոր ծառայութեան լծուեցայ: Մեր թեմի 47րդ Պատգամաւորական ժողովը միաձայնութեամբ գիտ առաջնորդ ընտրեց, Ուրբաթ, 31 Յունուար 2003ին:

Հ. Յ. Դ. «ԱԶՍԱՍԱՐՏ» ԿՈՄԻՏԵՆ

Կը ներկայացնէ՝

ARMENIA: THE BETRAYED

(BBC 2 կայանին պատրաստած Հայկական Յեղասպանութեան մասին վաւերագրական նոր ժապաւենը)

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 17 Փետրուար 2003, Երեկոյեան ժամը 8:00ին, «Ազատամարտ» ակումբի սրահին մէջ:

Advertisement for the film 'Armenia: The Betrayed' (Հ.Յ.Դ. «ԱԶՍԱՍԱՐՏ» ԿՈՄԻՏԵՆ). It features a checkered graphic with the year '2003' and the title in both Armenian and English. The text describes the film as a historical documentary about the Armenian Genocide, produced by BBC 2. It is scheduled for screening on Tuesday, February 17, 2003, at 8:00 PM in the 'Azat Marz' club hall. The film is presented by the 'Հ.Յ.Դ. «ԱԶՍԱՍԱՐՏ» ԿՈՄԻՏԵՆ' (H.Y.D. 'Armenia: The Betrayed' Committee). The screening is part of the 'Armenian Week' (Հայաստանի շաբաթ) organized by the 'Armenian Cultural Center' (Հայաստանի Կուլտուրային Կենտրոն) in Yerevan. The film is a historical documentary about the Armenian Genocide, produced by BBC 2. It is scheduled for screening on Tuesday, February 17, 2003, at 8:00 PM in the 'Azat Marz' club hall. The film is presented by the 'Հ.Յ.Դ. «ԱԶՍԱՍԱՐՏ» ԿՈՄԻՏԵՆ' (H.Y.D. 'Armenia: The Betrayed' Committee). The screening is part of the 'Armenian Week' (Հայաստանի շաբաթ) organized by the 'Armenian Cultural Center' (Հայաստանի Կուլտուրային Կենտրոն) in Yerevan. The film is a historical documentary about the Armenian Genocide, produced by BBC 2. It is scheduled for screening on Tuesday, February 17, 2003, at 8:00 PM in the 'Azat Marz' club hall. The film is presented by the 'Հ.Յ.Դ. «ԱԶՍԱՍԱՐՏ» ԿՈՄԻՏԵՆ' (H.Y.D. 'Armenia: The Betrayed' Committee). The screening is part of the 'Armenian Week' (Հայաստանի շաբաթ) organized by the 'Armenian Cultural Center' (Հայաստանի Կուլտուրային Կենտրոն) in Yerevan.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

Հ.Մ.Ը.Մ. 2-0 ԱՐԴԻՆԵՐՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ԱՐԼԻ ՍԱՅՏԱՆ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութան 15րդ եւ դարձի 2րդ հանգրուանի մրցումներուն, երէկ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ալիի Սայտան՝ արձանագրելով եղանակի իր 11րդ յաղթանակը:

Երթին Ալիի Սայտան 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը խլած էր Հ.Մ.Ը.Մ.էն: Երէկւան մրցումին անիկա յիշատակելի գրեթէ ոչինչ կրցաւ ընել:

Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ պարտութեան մատնել հարաւեան խումբը, որ Ռիատա Ուալ Ատապի նման երթին չէր պարտուած:

Յարդ անպարտելի միակ խումբը՝ Հ.Մ.Ը.Մ., որ իր արձանագրած այս յաղթանակէն ետք 35ի բարձրացուց այս եղանակին իր կէտերուն ընդհանուր հաշիւը, երէկւան մրցումին սկիզբէն մինչեւ աւարտը պայքարեցաւ մրցակից խումբին՝ եւ ... ցեղին դէմ՝ նկատուեանայով, որ դաշտին վիճակը այնքան ալ քաջալերական չէր: Մրցումին 25րդ



Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն մաս մը

վայրկեանին, Յակոբիկ Տօնապետեան դաշտին կէսէն սքանչելի փոխանցում մը ստանալէ ետք Վարդան Ղապարեանէն, «ամենայն հանդարտութեամբ» նշանակեց իր կապմին եւ մրցումին առաջին կողմը: Բ. կիսախաղին սկիզբը, այս անգամ Վարդան Ղապարեան, նշանակեց Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ կողմը (59րդ) վայրկեանին խաբէլէ ետք քանի մը յետապահ եւ բերդապահ՝ մեծ ուրախութիւն պատճառելով դաշտին թրիպիւններուն վրայ գտնուող համակիրներուն:

Մրցումին երկու կողմին ալ սքանչելի էին: Հ.Մ.Ը.Մ. կողի քա-



Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները, որոնք մրցումէն ետք կ'ողջունեն իրենց համակիրները (Լուսնկարները՝ ՍԹԻՏԻՕ ՖՈՐՏՕ ՏԻԳՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ)

ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

ՄԻՒՆԻԽԻ ՏԵՐՊԻՆ ՎԵՐՋ ԳՏԱԻ ՊԱՅԻՐՆԻ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ՝ 5-0

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուստալիկա) 21րդ հանգրուանի մրցումներուն, սպասուած հանդիպումներ-

ին մէկը եղաւ ինչպէս միշտ, Միւնիխ քաղաքի տերափին՝ 1860 Միւնիխի եւ Պայերն Միւնիխի միջեւ: Պարագլուխի դիր-



Պայերնի մարզիկները կը տօնեն իրենց յաղթանակը

քը գրաւող Պայերն Միւնիխ, որ ոչ մէկ ճիգ կը խնայէ 18րդ անգամ ըլլալով այս տիտղոսին (Պուստալիկա) տիրանալ, 47ի բարձրացուց այս եղանակին իր ունեցած կէտերուն թիւը: Նշենք սակայն, թէ հակառակ իր արձանագրած այս յաղթանակին, Պայերն տակաւին ուր կէտով կը գերապանցէ 2րդ դիրքը գրաւող Պորտուգալիա Տորթուսը, որ իր կարգին յաղթանակ մը արձանագրեց 4-1 արդիւնքով պարտութեան մատնելով Պոխումը:

Միւնիխ քաղաքի տերափին թէեւ Պայերն Միւնիխ 5-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, սակայն անիկա սպասեց մինչեւ 58րդ վայրկեանը, նշանակելու համար մրցումին առաջին կողմը, շնորհիւ՝ Մեհմէթ Շոլի, որ յաջողեցաւ երկու այլ

կողմեր եւս նշանակելով (69րդ եւ 80րդ) հէթը մը իրագործել: Պայերնի մնացեալ կողմերը նշանակեցին ֆրանսացի Պիլլէթէ Լիսարպու (71րդ) եւ փերուցի Քլաուտիօ Փիլպարօ (78րդ):

Տորթուսի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումին, թէեւ հիւր կապը՝ Պոխում ինք բացաւ մրցումին հաշիւը, շնորհիւ՝ Տարնո Պաքիի (8րդ), սակայն անցեալ եղանակի ախոյեանը չորս անգամ պատասխանելով տարա վերջնական յաղթանակը: Տորթուսի կողմը նշանակեցին Կիսիփի Ռէնա (33րդ), չէեւեան Քոլլըր (42րդ) եւ Թորպօրն Ֆրիկկ (45րդ) եւ 68րդ՝ վեւայթով:

Շալքէ բարձրացաւ չորրորդ դիրք 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Շթուրթարթը, շնորհիւ՝ պելճիքացի Էմիլ

նի մը առիթներ եւս ստեղծեց. ամէնէն յիշատակելին կարելի է սեպել Դրօ Քէիէյեանի զօրաւոր հարուածը, որ զսպուեցաւ Ալիի Սայտանի բերդին սիւնին կողմէ (Վարդանի կողմէ քանի մը վայրկեաններ ետք միայն):

Օրուան իրաւարարը՝ Իպրահիմ Իտրիս թէեւ քանի մը սխալ միջամտութիւններ րրաւ, սակայն ընդհանուր առմամբ ան բաւական լաւ ձեւով կրցաւ կատարել իր պաշտօնը: Սակայն պէտք է նշել, որ Վարդան Ղապարեանի եւ Յակոբիկ Տօնապետեանի ստացած դէղին քարտերը անիմաստ էին: Վարդան կը բողոքէր իրաւարարին մէկ սուլիչին, մինչ Յակոբիկ, որ օժտալու մէջ գնդակը կը հարւածէր, յայտնապէս չլսեց իրաւարարին սուլիչը:

Երէկուան մրցումին Հ.Մ.Ը.Մ.ի կապմէն կը բացակայէին Սամուէլ Պողոսեան եւ շուէտացի Թոմաս Պիորը:


Հակառակ այս երկու փորձառու յետապահներուն բացակայութեան, Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր մարզիկներն ալ քաջառիկ մրցում մը կատարեցին:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՍՓՐԵՉ ՎԵՐՋ ՄԸ ԴՐԱՒ ԼԵՅՔԵՐՉԻ ՅԱՌԱՋԽԱՂԱՅՔԻՆ

ԷՆ. ՊԻ.

Էյի շարքա վերջի մրցումներուն, Սան Անթոնիօ Սփրբոյ վերջ մը դրաւ Լոս Անճելըս Լէյքըրզի յառաջիադաքին, որ վերջին ետք մրցումներուն արձանագրած էր յաջորդական ետք յաղթանակ: Սփրբոյ իր յաղթանակը արձանագրեց 103-95 արդիւնքով եւ այդ մէկը՝ Լոս Անճելըսի մէջ: Նշենք, թէ այս եղանակին անոնք երկուքը երեք անգամ իրարու դէմ յանդիման եկած են եւ երեքին ալ Սփրբոյ յաղթական դուրս եկած է:



Թիմ Տանքըն

Մինչ Սփրբոյ կ'արձանագրէր եղանակի իր 35րդ յաղթանակը, անդին Լէյքըրզ կը կրէր եղանակի իր 24րդ պարտութիւնը: Սփրբոյ ցարդ կրած է 16 պարտութիւն, մինչ Լէյքըրզ արձանագրած է 26 յաղթանակ:

Սփրբոյի արձանագրած այս յաղթանակը նկատուեցաւ ԷՆ. ՊԻ. Էյի պատմութեան մէջ մեծ իրագործում մը, որովհետեւ ցարդ ոչ մէկ խումբ յաջողած է օտար դաշտերու վրայ ետք յաջորդական յաղթանակներ արձանագրել: Անիկա իր կատարած վերջին 19 մրցումներուն, այսպիսով արձանագրեց իր 16րդ յաղթանակը:

Թէեւ մրցումին աստղը հանդիսացաւ Լէյքըրզի մարզիկ Քուպէ Պարպըր, սակայն անոր կողմէ նշանակուած 44 կէտերը յաղթանակ մը չկրցաւ ապահովել իր կապմին: Իսկ անոր

խմբակից Շաքիլ Օնիլ նշանակեց 21 կէտ: Յաղթական կապմէն ամէնէն աւելի շատ կէտեր նշանակող մարզիկը հանդիսացաւ Թիմ Տանքըն, որ նշանակեց 28 կէտ եւ 20 ռիպաւնտ. անոր խմբակից ֆրանսացի Թոմի Պարբըր նշանակեց 24 կէտ եւ 6 եսիսթ:

Յարդ նուապագոյն պարտութիւն կրող Տալաս Մալքըրիքս (12) արձանագրեց եղանակի իր 39րդ յաղթանակը 110-103 արդիւնքով պարտութեան մատնելով Մեմֆիս Կրիպիդը: Մալքըրիքսի յաղթանակը կերտողները հանդիսացան գերմանացի Տըրք Նովիթցի եւ Մայքըլ Ֆինլէյ, որոնք յաջորդաբար նշանակեցին 31 եւ 29 կէտ: Սաքրամենթօ Քիւկկ արձանագրեց եղանակի իր 36րդ յաղթանակը 110-81 արդիւնքով պարտութեան մատնելով Սիեթլ Սուփըրսոնիքսը:

Ետք ձեյ ծանր պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ուաշինկթըն Ուիլքըրսթը 109-77 արդիւնքով: Յաղթական կապմին մարզիկներէն Քարլ Մալոն նշանակեց 23 կէտ, իսկ Ուիլքըրսթի մարզիկ Մայքըլ Ճորտըն՝ միայն 11 կէտ:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները:
Աթլանթա Շոքս - Ինտիանա Փէյլըրզ 98-97
Թ. Ռեփթըրզ - Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ 114-118
Նիւ Ճըրզի Լէյք - Շիքաօ Պուլզ 90-72
Մեմֆիս Կրիպիդ - Տալաս Մալքըրիքս 103-110
Սիքսթոնթա Վուլվզ - Նիւ Օրլինզ 114-93
Ֆիլ. Սիքսըրզ - Օրլանտօ Մէճիք 99-98
Հիուսթըն Ռոքեթթց - Մայնեմի Հիթ 82-94
Միլուուեի Պաքս - Տիթթոնիթ Փիլթընզ 96-86
Ֆեօնիքս Սաքզ - Նիւ Եորք Նիքս 115-116
Ետլօք Ճէզ - Ուաշինկթըն Ուիլքըրսթ 109-77
Սաքր. Զիկկզ - Սիեթլ Սուփըրսոնիքս 110-81
Լ. Ա. Լէյքըրզ - Սաք Անթոնիօ Սփրբոյ 95-103

ԻՍՐԱՅԷԼ ԱՆՈՐՈՇ ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ

պա եւ Այրլոնդանան շրջափակուած են Փետրուար 10էն ի վեր: Ետք օրուան որոշումը իրաւորող պատճառը իսրայէլեան հրաւալի մը վրայ գործուած յարձակումն էր: Հրասայլը կ'անցնէր կապալի հիւսիսային շրջանէն, Տուկիթ հրեական բնակեցման վայրին մօտ, երբ ձաւթուն եկերթը վետեղուած ական մը պայթեցաւ: Հրասայլին մէջ գտնուող չորս վիւնուորները սպանուեցան, իսկ հրասայլը իրոյ ձաւթակ դարձաւ: Իսրայէլացի բարձրաստիճան վիւնուորական մը ըսաւ, որ վետեղուած ականը 100 քկ. էր: Ան ամբաստանեց Համասը, որ ընդհանրապէս ստանձնած է նման յարձակումներու պատասխանատուութիւնը: Աւելի ուշ, Համասի վիճակ թելը «Իսրայէլի ֆրանսամի Փաղանգները» ստանձնեց գործողութեան պատասխանատուութիւնը: Իսրայէլական փիւստ եւս յայտարարեց, թէ կատարած է գործողութիւնը: Յստակ չեղաւ, թէ ո՞վ է հեղինակը:

Իսրայէլեան ազդիւրներ աւելցուցին, որ պաղեստինեան շրջաններուն փակուած անհրաժեշտ միջոցառում պիտի դառնայ, եթէ Միացեալ Նահանգներ գործարարութեան դնեն Իրաքի դէմ պատերազմի ծրագիրը: Փակուեան ամէնէն աւելի կը վնասուին Իսրայէլի մէջ գործելու արտօսութիւն ունեցող պաղեստինցիները, որոնք այս որոշումին յայտն տակ անգործ կը մնան:

Պաղեստինեան շրջաններու շրջափակումը չարգիլեց բախումները: Նապոլուսի մէջ երէկ սպանուեցաւ պաղեստինցի մը եւ ուր ուրիշներ վիրաւորուեցան, երբ բախումներ ծայր տուին իսրայէլեան ուժերու եւ պաղեստինցի վիճակներու միջեւ: Ականատեսներ յայտնեցին, որ բախումը ծայր տուաւ, երբ իսրայէլեան ջոկատ մը պաշարեց շէնք մը Նապոլուսի մէջ: Պաղեստինցի խումբ մը պատասխներ հակադարձաձե եւ քարեր տեղադրեցին վիւնուորներուն վրայ, որոնք պատասխանած են կրակ բանալով:

Իսրայէլեան ուժերը Նապոլուսի մէջ ձեռքաւարտեցին ՊԱԿԻ գործադիր խորհուրդի անդամ Թալալ Նապոլուսի:

ՊԱԿԵՍՏԻՆԵՑԻ բարձրաստիճան պաշտօնատար Նապիլ Շաքս յայտնեց, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ յառաջիկայ երկու - երեք շաբթուան մէջ վարչապետ մը պիտի նշանակէ:

(ԱՅՓ)

<p>ԳՐԱԴՈՒՄՈՐ</p> <p>29 ՄԱՐՏ 2003</p> <p>Հ. Յ. Դ. «ՆԻԿՈՒ ԴՈՒՄԱՆ» ԱՎՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ</p>	<p>ԳՐԱԴՈՒՄՈՐ</p> <p>Հ. Յ. Դ. «ԳՐՕ»</p> <p>ԱՎՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ</p> <p>17 ՄԵՅԻՍ 2003</p>
<p>ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է</p> <p>ՎԻՈՒՆ ՏԻՇՉԵՔԵՆԵԱՆԻ</p> <p>Հայրենասիրական երգերու ամփոփ սկաւառակը - CD</p>	

ԱՆՍԱԼՈՎ ՈՒՄՈՒՆԿԵՐՆԵՐԻ
ԹԵԼԱԳՐԱՆՔԻՆ

ԹԻՖԼԻՍ 6 ԱՍԻՍՈՎ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ
ԱՐԽԱԶԻՈՅ ՄԵՋ ՌՈՒՍԱԿԱՆ
ՈՒԺԵՐՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ
ԺԱՍԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեարտանովի շարքում է, թե վրաստան Արխայիոյ մէջ ռուսական խաղաղարար ուժերուն սպասարկութեան ծամանակաշրջանը 6 ամիսով պիտի երկարաձգէ՝ Մ. Նահանգներու թելադրանքով:

«Ամերիկեան թելադրանքը այն է, թե պէտք է ռուսական ուժերուն սպասարկութեան ծամանակաշրջանը վերջին անգամ ըլլալով երկարաձգենք, միայն յաւելեալ 6 ամիսով», ըսած է Շեարտանով, որ նախագահ խոստացած էր, թե երկարաձգում պիտի չըլլայ:

Ռուսիա 1994էն ի վեր Արխայիոյ մէջ 3000 ուժ կը պահէ:

Շեարտանովի յայտնած է, որ իր որոշումը տուած է նախագահ Ճորձ Պուշի թելադրութեամբ: Պուշ կոչ ուղղած է անոր համբերատար ըլլալ եւ «յսել խրատները բարեկամներու, որոնք մօտ առեւնէն մասնակից պիտի ըլլան Արխայիոյ հարցին լուծման», ըսած է ան:

Արխայիոյ եւ այլ հարցեր սաստիկ լարած են Ռուսիոյ եւ Վրաստանի միջեւ յարաբերութիւնները:

Շուրջ 250 հազար վրացիներ խոյս տուած են Արխայիայէն կարճատեւ պատերազմէ մը ետք, որ վերջ գտած է 1993ին, վրացական ուժերուն հեռացումով:

Այլ հարց մըն է ռուսական այն ամբաստանութիւնները, թե Վրաստան հանդուրժած է Փանքիսի կիրճին մէջ ապաստանած չեչէն ըմբոստներու ներկայութիւնը:

Շեարտանովի շարքում է, որ Վրաստան այժմ ուժեղ բարեկամներ ունի: «Մ. Նահանգները մեր գլխաւոր դաշնակիցն ու գործակիցն են այժմ», ըսած է ան:

Վրաստանի մէջ կը գտնուին ամերիկեան ուժեր, որոնց պարտականութիւնը երկրին ուժերը մարպէլ է «սահմանափակ ղեկավարութեամբ»:

Շեարտանովի յայտնած է, թե նպատակը «Վրաստանի ինքնապաշտպանութեան միջոցներ տալ է՝ անհրաժեշտ պարագային»:

Անցեալ ամիս, նախագահ Վլատիմիր Փութին պատրաստակամութիւն յայտնած էր իր ուժերը հեռացնելու Արխայիայէն, եթէ Թիֆլիս պիտի:

Մինչ այդ, Վրաստանի ներքին գործոց նախարար Վալերի Խաչուրիան յայտնած է, թե հակառուս իսլամական ծայրայեղականներ ապաստան գտած են Արխայիոյ մէջ, վրացական ուժերուն կողմէ անոնք Փանքիսի կիրճէն դուրս քշուելէ ետք:

Ան ըսած է, որ մեծ թիւով չեչէն ըմբոստներ, որոնց կարգին ուսանողական իսլամական ըմբոստներ, Արխայիոյ մէջ ապաստան գտած են:

Ռուսիա ուսանողական արմատական շարժումը ամբաստանած է Չեչենիոյ մէջ անջատողական պիւնտըր շարժումին ետին կանգնելու յանձնարարով:

Անցեալ աշնան, Վրաստան պիւնտըրական մեծ գործողութեան մը ձեռնարկած էր հակառուս չեչէն անջատողականներ Փանքիսի կիրճէն դուրս քշելու համար:

(ԱՅՓ)

ՊԱՆԿՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼԵՆ
ԱՆՎԵՐԿԻՉՆԵՐՈՒ ԽՍՐԱԿ ՍԸ

Պահրէյն շարքավերջին յայտարարած է, թե 5 հաբեկիչներու խմբակ մը գտած է եւ թե անոնք հաւանաբար «Քալիտա» ցանցին հետ կապ ունին: Բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնած է, թե 5 կանկաձեղիները սիննի իսլամական պահրէյնցիներ են, որոնք 3 օր առաջ ձերբակալուած են: Առաջին անգամ ըլլալով էր, որ Պահրէյն կը յայտարարէր պահրէյնցի «հաբեկիչներու» իր հողամասերուն վրայ ձերբակալութիւնը՝ Մ. Նահանգներու մէջ 11 Սեպտեմբեր 2001ի յարձակումներէն ի վեր:

Ապահովութեան ուժերը գրաւած են «պէնթեր եւ պիւնտըր», զորս խմբակին անդամները «պիտի գործածէին հաբեկիչական արարքներ կատարելու համար երկրին եւ անոր քաղաքացիներուն ապահովութեան դէմ», ըսած է պաշտօնատարը:

(ԱՅՓ)

ՔՐՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅԵՐ՝
ՖՐԱՆՍԱՅԻ, ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ
ԹՈՒՐԲԻՈՅ ՄԵՋ

Ֆրանսայի, Յունաստանի եւ Թուրքիոյ մէջ հապարտոր քիւրտեր Շարք օր ցոյցերու դիմած են՝ քիւրտ ըմբոստ դեկալար Ապտիլլա Օճայանի ապտարձակումը պահանջելով:

Թուրքիոյ տարածքին ոստիկանութիւնը աւելի քան 70 ցուցարար ձերբակալած է: Պոլսոյ մէջ, ուր հրահր գոմարքար արձակուած են, 40 հոգի ձերբակալուած է:

Օճայան, որ անցնող 4 տարիներուն Իմրալի կղզի-բանտին մէջ բանտարկուած է, մահապատժի ստացած է դաւաճանութեան յանցանքով: 2001ին անոր դէմ վճիռը ցկեանս բանտարկութեան վերածուած է, Թուրքիոյ կողմէ մահապատժի ջնջումէն ետք՝ բարեկարգումներու ծիրէն ներս, երկիրը Եւրոպական Միութեան չափանիշներուն հասցնելու համար:

Քիւրտ դեկալարներ յայտնած են, թե մտահոգ են՝ նկատի ունենալով, որ գրեթէ 3 ամիսէ ի վեր տեղեկութիւն չունին Օճայանի մասին:

Արեւելեան Ֆրանսայի Սթրասպուրկ քաղաքին մէջ շուրջ 10 հազար հոգի հաւաքուած է:

Պոլսոյ մէջ ոստիկանութիւնը բախում ունեցած է ցուցարարներու հետ, որոնք միացած են Իրաքի դէմ հաւանական պատերազմի մը դէմ ցոյց կատարող խմբակի մը: Ոստիկանութիւնը ցրուած է ցուցարարները կրահապատ կառքերու օգտագործումով:

ՔԱՆՈՒՄՆԵՐ

Քիւրտեր եւ ոստիկաններ բախումներ ունեցած են նաեւ հարաւային Ատանա եւ Մերսին քաղաքներուն մէջ: Ըստ «Անատոլոյ» լրատու գործակալութեան, Ատանայի մէջ ցուցարարներ օթուպիւնք քարկոծած են, իսկ Մերսինի մէջ այրող անիւներով պատնէշներ շինած:

Տիարպէքիի մէջ, ոստիկանութիւնը Շարք օր յայտնած է, թե ձերբակալած է 9 անձեր, զորս ամբաստանած է ապօրինի գործունէութեամբ կամ արգիլուած ցոյցերու մասնակցած ըլլալու յանցանքով:

Անոնք անդամ են ՔԱՏԷՔԻ, որ ՔԱԿԻ նոր անունն է:

(ԱՅՓ)

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՍԵՆՈՒԼ. - Հիւս. Բորէյայի դեկալար Բիւժնիկ - Իլ երեկ իր ճիւղ տարերարը նշած է՝ բանակին կոչ ուղղելով, որ իր աշխատանքներուն թափ տալ առ ի պատրաստութիւն ամերիկեան յարձակումի մը:

● ԹԵՎՐԱՆ. - ՄԱԿԻ մարդկային իրաւանց պաշտպաններու պատուիրակութիւնը մը Շարք օր Թեհրան ժամանած է՝ անկիւնադարձային այցելութեամբ մը, որ 7 տարիէ ի վեր առաջինն է նման խմբակի մը կողմէ:

● ԱԹԷՆԷ. - Յունաստանի արտերալ նախկին քաղաք Բոնասթիսին, որուն Յունաստանի կառավարութեան հետ յարաբերութիւնները լարուած են, Շարք օր կարճատեւ, անակնկալ այցելութեան մը համար Յունաստան հասած է: Ընկերվարական Կուսակցութիւնը 1994ին որդեգրած է օրէնք մը, ըստ որուն նախկին թագաւորը պիտի լինէ յունական քաղաքացիութեան եւ անցադէմ:

● ԱԼԺԷ. - Ալճերիոյ հիւսիսարեւելեան Քապիլիք շրջանին մէջ, տեղական ապահովութեան ուժերու 2 անդամ սպանուած է Շարք օր, իսլամական պիւնտըր ծայրայեղականներու կողմէ, ըստ ապահովական աղբիւրներու:

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐԿԻ
ՏԱՐԱԾՔԻՆ...

Րազմներուն ինկած պոհերուն թիւէն:

Մեծ ցոյցեր կազմակերպուեցան նաեւ պատերազմը մերժող Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ, ինչպէս նաեւ Իտալիոյ եւ Սպանիոյ մէջ, որոնց կառավարութիւնները պօրավիզ կը կանգնին Ուաշինկթընի կեցածքին: Պատերազմը մերժող Ռուսիոյ մէջ ալ մեծ ցոյցեր տեղի ունեցան:

Միջին Արեւելքն ու արաբական աշխարհն ալ մեծ ցոյցերու թատերաբեմ դարձան, սակայն շատ աւելի համեմատ թիւերով քան ամբողջ աշխարհը, հակառակ անոր որ պատերազմը կրնայ սպանալ ամբողջ շրջանին: Արաբական աշխարհի մեծագոյն ցոյցը՝ Պաղտստէն դուրս, տեղի ունեցաւ Դամասկոսի մէջ, ուր 200 հազար ցուցարարներ մասնակցեցան:

Յուցարարները ուղղուեցան խորհրդարան՝ սուրիական, իրաքեան եւ պաղեստինեան դրօշակներ բարձրացուցած: Պատաններէն մէկուն վրայ կը կարդացուէր. «Այսօր Իրաքը, վաղը ո՞վ»:

Պէյրութի ցոյցին մասնակցեցան տասը հազար ցուցարարներ: Իսկ Գահիրէի մէջ պատկերը շատ աւելի համեմատ էր. 600 հոգի միայն հաւաքուած էր մերժելու համար Իրաքի դէմ պատերազմը Ամմանի մէջ քանի մը հազար հոգի:

Տ ա գ ն ա պ ի ն առանցքը կազմող Պաղտստի եւ իրաքեան այլ քաղաքներու մէջ կազմակերպուած ցոյցերուն մասնակցեցան աւելի քան մէկ միլիոն իրաքցիներ: Իրաքեան մամուլը

շարունակուած Ա. Էջէն ողջունեց համաշխարհային ցոյցերը՝ դիտել տալով, որ անոնք յաղթանակ են նախագահ Սատտամ Հիւսէյնի համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ
ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԽԱՂԱՂԱՐԱՐ
ՃԻՂԵՐ ՈՒ
ՆԱԽԱՁԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչ մէկ կողմէն Ուաշինկթըն թափ կուտայ պատերազմի պօրակցութեան ապահովելու ճիգերուն, միւս կողմէ, միջազգային թէ շրջանային մակարդակի վրայ կը շարունակուին խաղաղարար ճիգերը:

Գահիրէի մէջ, արաբական երկիրներու արտաքին գործոց նախարարները արտակարգ հանդիպում մը ունեցան քննարկելու կացութիւնը, ինչպէս նաեւ նախապատրաստելու համար արաբական վեհաժողովը: Արաբական աշխարհը սակայն միակամ չէ եւ տարակարգ ծիր կը մնայ տագնապը լուծելու միջոցներուն մասին: Քուէյթի արտաքին գործոց նախարարը ըսաւ, որ հարցը կը լուծուի եթէ Իրաքը մէջ բան մը պատահի, կամ Սատտամ Հիւսէյն իշխանութենէն հեռանայ:

Պահրէյնցի ներկայացուցիչը եւս ըսաւ, որ արաբական աշխարհը պէտք է Իրաքի իշխանութիւններուն յստակացնէ թէ կացութիւնը որքան վտանգաւոր է: Արաբական աշխարհին մէջ տիրող տեսակետներէն մէկը կը կէտնէրէն մէկը կը պահանջէ, որ Սատտամ մեծ անոր կառուած մէջ կազմակերպուին: Այլ տեսակետ մը կը պահանջէ, որ ՄԱԿի քննիչները շարունակեն աշխատանքը եւ տագնապը լուծուի ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի ճամբով:

Գահիրէի ժողովի մասնակցեցաւ նաեւ Եւրոպական Միութեան ընթացիկ նստաշրջանի նախարարաքին գործոց նախարար Ճորձ Փափանտրէու, որ յոյս յայտնեց, որ տագնապը խաղաղութեամբ լուծուի:

Արաբական աշխարհին նման տարակարծիք կը մնան ՕԹԱՆ եւ Եւրոպական Միութիւնը: ՕԹԱՆի դեսպաններ երեկ անգամ մը եւս առկախեցան ընթացքին չեղած համախոհութիւնը մը գոյացնել, յատկապէս՝ Եւրոպական Միութեան կողմէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

● ՄԱԿԻ քննիչները քարտուղար Բոֆի Անան ըսաւ, որ Ապահովութեան Խորհուրդը կրնայ երկրորդ որոշում մը տալ, սակայն ատիկա չի նշանակել թէ պատերազմը անխուսափելի է:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԵՒՈՐ
Գ. ԻՓԷԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԵՒՈՐ
Մ. ԻՇԽԱՆԻ
ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ
ԲԵՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՕՀՐԱՊ ԵՍԳՈՒՊԵԱՆ
27 ՓԵՏՐՈՒՄ 2003ԷՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԵՆ ՈՒՐԱՅԻՆ, ԶԱՐԱՅԻՆ
ԵՒ ԿՈՐԿԻ ՕՐԵՆԵՐ ԵՐԿԱՅԵԱՆ ԶԻՇՂ ԺԱՄԸ 8:30ԻՆ,
«ՅԱԿՈՐ ՏԵՐ ՄԵԼԵՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԵՋ:
ԶԵՐԵԿՈՅՈՒՆ ԿԵՐԱԿԻ ԿԵ ԺԱՄԸ 4:00ԻՆ
ԵՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ԿԵՐԻ ԹԵՐԶԵԱՆ
Տոմսերը ստանալ Կամազգայինի գրասենտրոն, Զաղոյեան կեդրոն - տիպոքոք ճեղք, Պուրճ Կամուտ - Օպելիցս գրասենտրոն, ԱՅՔԻԿԱ եւ երկրի օրերը կիշէն:

Հայ Կաթողիկէ
ՄԵՍՐՈՊԵԱՆ
Արուեստից Վարժարան
Բացում Գ. երկամսեակի
Անգլերէն եւ Օտար
Լեզուներ
Համակարգիչ
Դիմայարդարում
սկիզբը՝ 24 Փետրուար, 2003
Համակարգիչի լրիւ
դասընթացը՝ ամսական
միայն 25 հազար լ.ո.
260504
www.mesrobian.com